

ԲԱՆԱՀՅՈՒՍԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐ ԼՆՌՆԱՅԻՆ ՂԱՐԱՐԱՂԻՑ

ՍՎԵՏԼԱՆԱ ՎԱՐԳԱՆՍԱՆ

Ղարաբաղի լեռնային շրջանների ժողովրդական բանահյուսության նյութերի հավաքմամբ մեր բանահավաքները զբաղվել են դեռևս անցյալ դարից: 1860-ական թվականներին Առաքել և Գրիգոր Բահաթրյանները Ղարաբաղի բարբառով գրի են առել մեծ քանակությամբ հեքիաթներ: Այնուհետև, Մակար վարդապետ Բարխուդարյանը, Կոստանտին և Ալեքսանդր Մելիք-Շահնաղարյանները, Վարդ Դադյանը և ուրիշներ առանձնակի ջանասիրությամբ գրի են առել վիպական ժանրի ստեղծագործություններ լեռնային Ղարաբաղի տարբեր շրջաններից: Վերջին տարիներին քնարական և վիպական ժանրի բալամաթիվ ստեղծագործություններ են գրի առել նաև բանահավաքներ Սարգիս Խսրայելյանը և Մարգարիտ Գրիգորյանը:

Մենք 1967—1970 թթ. մեկնեցինք Հաղրութի, Մարտակերտի և Շուշիի շրջանները, գրի առանք հարուստ ու բազմաժանր ժողովրդական բանահյուսության մի շարք նմուշներ:

Ղարաբազն ունեցել է հարուստ ժողովրդական բանահյուսություն, որի զգալի մասը գրեթե մոռացվել է: Խոսքը վերաբերում է հատկապես քնարական բանահյուսության մի քանի տեսակներին՝ սիրերգեր, պարերգեր, ծիսային երգեր, հորովելներ, որոնք այսօր կամ չեն հիշում, կամ էլ առանձին գյուղերում հիշում են միայն հին սերնդի ներկայացուցիչները: Համեմատաբար կենսունակ են վիպական ժանրի ստեղծագործությունները, որոնց մեջ առանձնակի հետաքրքրություն են ներկայացնում հեքիաթները, երգիծական զրույցները, զվարճախոսությունները, առած-ասացվածքները, օրհնանքները, անեծքները, պատմական ավանդությունները, սնահավատական զրույցները:

Ծիսային բնույթի երգերի մի նմուշ ենք գրի առել Շուշի շրջանի Քարեն տակ գյուղում: Դա երաշտի ժամանակ կատարվող «Գոգի» երգն է: Հայտնի է, որ հնում հավատացյալ երկրագործը երաշտի դեմ պայքարելու համար այլ միջոց չուներ, բացի ծիսական արարողություններին դիմելուց: Ցանքսը պահպանելու «զորավոր» միջոց էր մատաղ անելը կամ «գետը մի քանի անգամ վարելը»: Երկու կին հագնում էին տղամարդու շորեր, դնում գլխարկ, եզների փոխարեն լծվում «ալաթին», երրորդը՝ աղմուկով ու աղաղակով կատարում էր հոտաղի պարտականությունները: Նույնպիսի միջոց էին որևէ սրբավայրի մոտ կրակ վառելը, էշի գլխին ջուր լցնելը և այլն:

Ծիսակատարության ընթացքում երեխաներն էլ իրենց պարտականություններն ունեին: Մեծահասակ կանայք պատրաստելով խաչաձև փայտյա տիկնիկ, չգետաղորդելով նրան, տալիս էին երեխաներին, որոնք տիկնիկը պատեցնելով դոնճ-դուռ և մատաղ հավաքելով երգում էին.

Գողի, Գողի, ա՛յ Գողի,
Մարքը մեռած, ա՛յ Գողի,

Տղան մեռած, ա՛յ Դողի,
Ցեղ ըմ օգում վարսը քսիմ,
Մաւ յըմ օգում քաթեն տիճիմ,
Թռնը ըմ օգում աշխաբը քըշի:

Երգողը, ըստ նրանց, պետք է անպայման երեխա լինի, որ «աստված սուսը հսկանա», չէ՞ որ «նա անմեղ ա ու արթնը Այդ երգի մի տարբերակը դրի ենք առել Հաղորություն, որի տեքստը քիչ է տարբերվում վերոհիշյալից, միայն տիկնիկի անունը ոչ թե «Գողգի» է, այլ «Ճողի»:

Հայտնի է, որ «Ալևույա» երգելու սովորությունը ընդհանրացած է եղել հայերի մեջ: Ալևույաները քրիստոսի ծննդյան հետ կապված շնորհավորական երգեր են, որոնք երգվում էին ծննդյան ճրագալույցի երեկոյան: Այդ օրը պատանիները խումբ-խումբ պտտվում էին գյուղում, բարձրանում այս կամ այն տան կտուրը և խմբից մեկը երգում էր «Ալևույա», փոխարենը ստանալով միրգ, քաղցրավենիք: Նման սովորություն է եղել Աշտարակում, էջմիածնում, Ղաղախում, Բորչալուի գավառում¹: Այդ երգը նոր Նախիջևանում «Ավետիս» էր կոչվում²:

1967 թ. Հագրուլի շրջանի Տումի գյուղում Սոնա Աղաջանի Օհանյանի դրի ենք առել «Ալևույաի» մի նոր տարբերակ, որը նախկինում գրավածներից տարբերվում է աշխարհիկ բովանդակությամբ, չնայած այն ևս, ասացողի վկայությամբ, երգվում էր ծննդյան ճրագալույցի երեկոյան: Դա ժողովրդական մի պարզ և անպաճույճ երգ է, որտեղ պատկերավոր ձևով և գեղեցիկ համեմատություններով տրվում են տոնական ծիսակատարության գողտրիկ պատկերները.

Ալևույա, Ալևույա.
Եկեք Լա տներ, պարավ եկեք.
Ջրոխնեք ա. ճիւղավ լիզնը.
Սունեքն ա, տաշած վեկե,
Փրոավանն ա. փրոփրոսում ա,
Մոծն ա՝ ծալած դումաշ.
Հուրքն ա, պուլուր լուսերնգյա,
Մոխն ա. հում բուրջում,
Խուրն ա. պուլուր եղցն,
Պողբն ա, վառ-վառ աստղեր,
Հացքոխն ա, փոնչ մանիշակ,
Հացերն ա, օծած խաչեր,
Մրհանն ա, վեկե շուշակ.
Սուտանն ա, քառ-քառ դռնեզ,
Օխտը ախպեր նստին մին սեղանու,
Օտին. խմին, կետեն նման իրկրետան;
Բ՛վագեն նման շրտանն:
Տոնը շեն, տոնը շեն,
Քաշ, կրնակլավ դուշման ա,
Աշկը հանե՝ մին աբասն:

Որոշ գյուղերում հին սերնդի մարդիկ դեռ հիշում են «Գյուղումի» երգեր, որոնք երգվում էին «Հըմփրցման տոնին, իսկ առանձին գյուղերում էլ «Վըր-

¹ «Ազգագրական հանդէս», X, Թիֆլիս, 1903, էջ 115, 116:

² Խ. Փոքրջան, նոր Նախիջևանի բանահյուսությունը, Երևան, 1965, 17:

Թալոորի՞ ժամանակ: Դրանք վիճակահանման հրգեոր են, որոնցով աղջիկները գուշակում էին իրենց բախտը.

Գյուլում, Գյուլում, Գյուլ շիշտգ,
Իմ Գյուլումըս փողած ա,
Պեցուր սարում կեղած ա,
Հու բըքենա՝ հարե ու ախպեր քաղած ա:

Անմիջական են այն խաղիկները, որոնցում արտացոլված են Ղարաբաղցի հրիտասարդի ապրումներ, խինդն ու ուրախությունը:

Ախշի անըմրտ ասա,
Կըլխետ յայլուխը խաս ա,
Քիճի քու մամու ասա
Ինձի փըռնե փըքսա:

Խորապես հուզական ու թախծոտ են սգո հրգերը: Դրանք ողբեր են, որոնք ասում են կամ հանգուցյալի հարազատները, կամ էլ գյուղի հայտնի ողբասացները: Ողբի հիմնական բովանդակությունը հանգուցյալն է: Հազրութի շրջանի Տումի գյուղում գրի ենք առել հետևյալ ողբը, որտեղ ողբասացը հրիտասարդ հանգուցյալի տատն է.

Խշըր շըրե ֆեղ հետե, ա՛յ քալա,
Հավաս շըրե ֆեզ հետե, ա՛յ քալա, հե՛յ,
Գյարգակը ֆամեն տարած քալա, հե՛յ,
Մըսացուկը կուլ կերած քալա, վա՛յ,
Ջոտնատ ֆամեն տարած քալա, վա՛յ,
Նըշընտրիքտ պըաստած քալա, վա՛յ,
Տանան, տեղան կարած քալա՛,
Փայալ, պեժնավ կորած, քալա՛,
Ամեն հիեշին աշկը յերա, քալա՛:
Ցուտ-ցուտ ըխպըրեմ ըմ պանալ,
այ իմ քալա՛,
Կանանշ յուրդերում ըմ պանալ. այ, քալա՛,
Այ իմ սրտավս դուզուն ֆաշած, քալա՛,
Ասածենբըտ քոռու կըանիմ,
ա՛յ, քալա՛...

Շարունակությունը առավել հուզիչ է, ուր բացահայտվում է հանգուցյալի հարազատի ներաշխարհը. Ձեշանածըտ հորը տանն ա, նըշնածատ հունց կը-վախշիմ, այ իմ ջսհիլ-ջիվան կորած քալա, տղենավ, ըխշըկենավ կորած քալա:

Մարտակերտի շրջանի Վանք գյուղում գրի ենք առել հրիտասարդ այրու ողբը: Նա սգերգում է իր ամուսնու աշխատասիրությունը, նրա հետ անցկացրած գեղեցիկ օրերը, առանց որի կյանքը անիմաստ է: Հետաքրքիր էր, որ հանգուցյալի գերեզմանը շրջապատած կանայք, ոմանք ծալապատիկ նստած, ոմանք՝ ծնկաչոք, ձայնակցում էին իրար: Իրականում, կարծեք, թե ամեն մեկը իր վիշտն էր սգում: Դժվար էր նույնիսկ որոշել, թե ով ինչ էր ասում, միայն լսվում էին աղեկտուր ձայներ: Իսկ հետո, կանանցից մեկին ուղղակի առաջարկվեց. «Տու շատ ըս դըրդոտած, դըրդերատ ասե, թող սկանան, ա, քամ-բախտ կընեգ», ու նա, կարծեք, հանգուցյալի հարազատների վիշտը թեթևացնելու համար պատմում է իր վշտերի մասին. «Դարգերըս տուբուր մեք տալ,

չանրս ղըլղըլում առ ու հիշում է իր վաղուց մեռած հարազատին, նրա կյանքից որոշ դեպքեր ու պատվիրում, հանգուցյալին անձնավորելով, պատմել նրան իր սրտակեղեք կարոտի մասին:

Ղարաբաղի վիպական բանահյուսության մեջ առանձնակի տեղ են գրավում սնահավատական զրույցները զանազան ոգիների, երևակայական էակների մասին, որոնց ժողովուրդն անվանում է «քաշկեր»։ Քաշկերը պատկերվում են մարդակերպ, մեծ մասամբ կանանց կերպարանքով և անպայման հերարձակ։ Նրանց անմիջական ուղեկիցը «շուռնա-ղավալն» է։ Տարեց մարդիկ հավատով և երկյուղածությամբ են պատմում նման զրույցներ։ Նրանք պատմում են իբր ականատես, նշում նույնիսկ գործողության տեղն ու ժամանակը։ Հադրութի շրջանի Տումի գյուղի քնակիչ, 80-ամյա Աթանես Հայրապետյանը, զրույցն ավարտելուց հետո, մեր այն հարցին, թե «արդյոք եղե՞լ է այդ դեպքը», նա պատասխանեց. «Հա, իմ արևս, էն խաչը իլալ ա»։ Իսկ Շուշիի շրջանի Մեծ Ղարաղշլաղցի Նդիշե Բեգլարյանը երբ պատմեց իր զրույցը քաշկերի մասին, «մրհտե հունց ըմ քաշկալ ընգալ, ըղադվալ», մի տարեց կին երկյուղած ասաց. «Նդիշա, մին հացը կերած բիդիր, մինը մատաղ տված, տա հըզսրան մինն ա պրծնում»։ Շատ գյուղերում պատմում են, որ «մեր շենումը քաշկուտ, հընարքուտ մարթիք ըն ըլալ»։

Մեր հավաքած նյութերում ուշագրավ են օրհնանքները։ Դրանք խորիմաստ են և համակված մարդասիրությամբ։

Հացըտ քածա կենա,
Ճուրբտ ցուտ-ցուտ կենա,
Պերանրա քաղցր կենա,
Օտոդըտ շատ ինի,
Կյանքըտ՝ էրկան:

Կամ՝

Կենաց աջողակ ինիս,
Հին բախտավոր ինիս:

Սակայն մարդկային վատ արարքները արգահատելի են և մարդիկ իրենց վերաբերմունքն անեծքով են արտահայտել։

Հալիս, հալիս,
Ըսեղեն ծակավը անց կենաս,
Ասեղը կրվաղան շինիս,
Մոռուն տակը շոք քինիս:

Կամ՝

Ընիս, իլիս,
Կետեն նստիս ալեւ մաղիս:

Հավատացյալ երկրագործի համար մոգական զորություն ունեցող խոսքեր կան, որոնք նույնքան «զորավոր» են, որքան հմայական ծիսակատարությունները։ Դրանք աղոթքներ են։ Անասունը գիշերը հանդում է մնացել, գալից փրկելու համար, գալլի բերանը կապող ծեսեր անելուց հետո, աղոթքներ էին ասում. «Սըրփերին անըմը տամ ընք լալ, համ էլ ըսելիս. «Խրեսըս շըղը-թաթախ վետանըտ տակը, տու քըշերըս իմ կավըս ղընգանըտ տակեն հոքին պահիս»։ Ի միջի այլոց, աղոթքները և ծիսակատարությունները իրենց կենսունակությունը դեռևս չեն կորցրել։

Ղարաբաղի ժողովրդական վիպական բանահյուսության մեջ իր ուրույն տեղն ունի զվարճախոսությունը: Այն ամենակենսունակ և ժողովրդի կողմից սիրված երգիծական ստեղծագործություններից է: Ժողովրդական այս սրախոսություններն աչքի են ընկնում իրապատում և խրատա-դաստիարակչական բնույթով:

Զվարճախոսությունների հերոսները իրականության մեջ գործող կտտակասեր մարդիկ են, որոնց անվան շուրջը ստեղծվում են վիպական սրամիտ պատմություններ: Հաճախ որոշ մարդկանց որևէ ծիծաղաշարժ արտահայտությունը հիմք է դառնում զրույցների հորինման, որոնք և վերադրվում են ներանց: Զրույցների սյուժեները ընդգրկում են մարդկային կյանքի բազմաթիվ ոլորտները՝ սկսած առօրյա բազմազան հարցերից, վերջացրած սոցիալական իրադարձություններն ու կենցաղային հարաբերությունները: Կան մարդիկ, որոնց անվան շուրջը հորինվում են միայն զավեշտական պատմություններ, և, կարծեք, նրանց հիմնական նպատակը միայն ծիծաղեցնելն ու զվարճացնելն է, անմեղ կատակներ անելը: Դրանք կենցաղային մանր հարցերի նկատմամբ այս կամ այն կերպ արտահայտած իրենց վերաբերմունքով դառնում են ծիծաղի առարկա: Մեկը ծիծաղելի է, որովհետև երևույթների ընկալման հարցում հանդես է բերում երեխայական պարզունակություն: Մեկ ուրիշն էլ ծիծաղաշարժ հերոս է հոգեկան անհավասարակշիռ վիճակի և բնավորության տարօրինակության համար: Այդպիսիներին Մարտակերտի շրջանի որոշ գյուղերում անվանում են «թարսիհիլոր» խոսող, իսկ որոշ գյուղերում՝ «շիլինգած» խոսող: Կան և այնպիսիները, որոնց համար բնորոշը սրամտությունն է: Սրանք էլ երևույթների նկատմամբ իրենց վերաբերմունքն արտահայտում են անսպասելի սրախոսությամբ և երգիծական հիանալի սրամտությամբ: Կան նաև սրախոսներ, որ իրենք են ծաղրի միջոցով կյանքի հոռի կողմերի և ժողովրդին խորթ տարրերի շուրջը ստեղծում ծիծաղի, հեգնանքի մթնոլորտ: Սրանց շուրջը հորինված զրույցներն էլ աչքի են ընկնում խորը բովանդակությամբ և բարոյա-խրատական իմաստով: Զվարճախոսներից մի մասին հատուկ է հանպատրաստից ստեղծելու սրամիտ արվեստը:

Հաղորդի ու Մարտակերտի շրջաններում զվարճախոսներն ունեն յուրահատուկ անվանումներ. «ղարափատչի», «հանաքչի», «շուլուխչի», «գյափչի»: Մարտակերտի շրջանի վանք գյուղում նրանց «գյափի-գյուփի» մարդիկ են ասում: Գրեթե բոլոր զվարճախոսներն էլ ունեն մականուններ, մեկը ստանում է բնավորության այս կամ այն հատկության, մյուսը սխալ արտասանած որևէ բառի, հաջորդը արտաքին արտառոց հատկանիշի համար:

Պըլը-Պուղու, Մուլ-Նասրեդինի մասին զրույցներն էլ այսօր շատ տարածված են Ղարաբաղում: Սակայն, դրանք էլ, բանահյուսական մյուս ստեղծագործությունների նման ժամանակի ընթացքում փոփոխվել են. լրացվել կամ կրճատվել է այս կամ այն երկախոսությունը կամ միջադեպը, կամ էլ պատրաստի զրույցը երկար տարիներ կենցաղավարելով տվյալ զվարճախոսի հայրենիքից շատ հեռու, ժամանակի ընթացքում վերագրվել է մի այլ զվարճախոսի: Իսկ շատերն էլ պատմվում են առանց նշելու զվարճախոսի անունը, դեպքը վերագրելով մի անհայտ մարդու:

Նման փոփոխություններն ի հայտ են գալիս, երբ համեմատում ենք նախկինում գրառած զրույցները վերջին տարիների գրառումների հետ: 1967 թ. Հաղորդի շրջանի Տումի գյուղում գրի ենք առել մի զրույց Պըլը-Պուղու մասին:

Այդ նույն զրույցը երկու տարի հետո դրի առանք Շուշիի շրջանի Քյոհնա շեն գյուղում՝ վերագրված Մուլա-Նասրեդինին:

Ոչ միայն Ղարաբաղում, այլև նրա սահմաններից դուրս գտնվող վայրերում տարածված է հարսի ներկայությամբ սկեսուր-սկեսրայրի վեճի մասին զրույցը, երբ մեկը մյուսից դուրս խլում է ջրի գնալու համար: Հետաքրքիր է հարսի միջամտությունը. «Ինչի՞ եք կռվում, մեկը հիմա թող գնա, մյուսը՝ վաղը»: Այս նույն զրույցի մի տարբերակը գրի ենք առել վաղ գյուղում, սակայն, վերագրված Պըլը-Պուղին: Այս տարբերակում զրույցը չի վերջանում հարսի նշված պատասխանով: Այն ունի իր շարունակությունը, որը կազմում է մի այլ զրույցի հայտնի բովանդակությունն այն մասին, թե ինչպես ծուլը հարսին այնքան ժամանակ հաց չեն տալիս, մինչև խրատվում է և իր տունը հյուր եկած ծնողներին անգամ գործի է դնում, որովհետև այդ ընտանիքի ըսկըզընունքն է՝ «Ով չաշխատի, նա չի ուտի»: Այս տարբերակում խրատողի դերում հանդես է գալիս Պըլը-Պուղին, իսկ աղջկա ծնողների դերում՝ Մեխր-Շահ-նաղարն ու իր կինը, որոնք պատահականորեն չեն ընտրված: Զրույցը, ժամանակի ընթացքում, ասացողների բերանում սոցիալական գոնավորում է ըստացել: Զրույցն ավարտվում է նույն գյուղում տարածված մի խորիմաստ ասացվածքով: Իրենց աղջկա աշխատասիրության վրա զարմացած ծնողներին Պըլը-Պուղին ասում է.

Մածուն ա, բան չի, մածունքան չի,
եռխա խրատելը ամեն մարդու պեն չի:

ЗАПИСИ ИЗ ФОЛЬКЛОРА НАГОРНОГО КАРАБАХА

СВЕТЛАНА ВАРТАНЯН

Р е з ю м е

Нагорный Карабах представляет собой одну из тех интересных областей, где вплоть до недавнего времени армяне продолжали сохранять многие черты своей самобытной культуры и быта.

Записи фольклорных материалов армян Нагорного Карабаха позволяют заключить, что в данном районе бытовали как традиционные виды народного творчества, которые сохранились в среде старшего поколения (ритуальные, трудовые песни и др.), так и те виды, которые и в настоящее время живут фольклорной жизнью (песни-плачи, анекдоты, предания и др.).